ՆԱԽԱԳԻԾ-Ա

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 4-րդ հարկի, 16.53քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով տրամադրել «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի, 16.53քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով տրամադրել «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող գույքը (0.498075հա հողամաս, 25809.96քմ շինություն) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.20212. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայականի համաձայն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպության գործունեության նպատակներն են՝ համաձայն իր կանոնադրության համակարգել և վերականգնել անհայտ կորած հայ ազատամարտիկների որոնման աշխատանքները՝ համագործակցելով ՀՀ պետական մարմինների, «Կարմիր խաչի» և այլ կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են անհայտ կորած և գերի ընկած հայ ազատամարտիկների որոնման և գերությունից ազատելու հարցերով: Աջակցել զինծառայողների և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների նյութական վիճակի բարելավմանը և օժանդակել սոցիալական հարցերի լուծմանը: Հոգալ վիրավոր, հաշմանդամ ազատամրտիկների առողջության մասին, հովանավորել նրանց բժշկական սպասարկման գործում: Իր նպատակների և խնդիրների իրականացման համար կապեր հաստատել և համագործակցել ՀՀ և օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին:

Ելնելով վերը շարադրվածից, ինչպես նաև ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ